

Արսեն Է. Հարությունյան

**ՄԻ ԽԱՉՔԱՐ Ա. ՀՈՒՓՍԻՄԵՒ ՎԱՆՔԻՑ\***

Ա.Հռիփսիմեի վանքի արևելյան կողմում գտնվող տապանաքարերի, պարսպապատի տակ շարված խաչքարերի ու դրանց բեկորների շարքում աչքի է ընկնում պատվանդանին ագուցված մի խաչքար: Ելնելով պատվանդանի և խաչքարի քանդակային հորինվածքում առկա տարբեր դարաշրջաններին բնորոշ որոշ առանձնահատկություններից՝ ակնհայտ են դառնում վերջիններիս ժամանակային տարբերությունները: Բացի այդ, պատվանդանի արևմտյան երեսը և խաչքարի քիվը արձանագիր են, որոնք բնորոշ են հնագրության տարբեր ժամանակաշրջաններին: Պատվանդանի վիմագիրը հայ հնագրության մեջ հայտնի՝ բոլորագիծ երկաթագրից բոլորգրին անցման օրինակ է, ինչը չի կարելի ասել խաչքարի քիվի արձանագրության մասին, որն առավել բնորոշ է ուշ շրջանի հնագրությանը:

**Սույն հոդվածի խնդրո առարկաներն են խաչքարի քիվի երկտող և պատվանդանի արևմտյան երեսին փորագրված ութ տողանոց արձանագրությունները:**

Պատվանդանն ունի 0,98 X 0,70 չափերը, որի արևմտյան երեսին փորագրված գիրն առնված է ուղղանկյուն, իսկ վերին հատվածը՝ եռակամար կիսաշրջանակում, որն առանձնանում է իր տեսակի մեջ: Հետաքրքիր է նաև արձանագրության թվականի քանդակային լուծման եղանակը, որը փորագրված է կենտրոնական կամարագծի աջ և ձախ անկյուններում՝ պարկանման քանդակների մեջ, որոնք ևս եզակի են որպես այդպիսիք:

Հայտնի է, որ հայ հնագրության մեջ տառաձևերի փոփոխություն նկատվել է XII դարում: Հատկապես ձեռագրերում մեծ թիվ են կազմել ուղղագիծ երկաթագրից բոլորգրին անցնող տեսակները: Բոլորգիրն իշխող գրատեսակ է դարձել սկսած XIII դարից, իսկ առանձին դեպքերում այս գրատեսակը հանդիպում է նաև X դարում<sup>1</sup>:

Ըստ Կ. Ղաֆադարյանի՝ հայ գրատեսակներից բոլորաձև երկաթագիրը վիմական արձանագրություններում կիրառվել է սկզբից մինչև մեր օրերը: Սակայն իր գոյության ընթացքում այն ենթարկվել է որոշակի փոփոխությունների, որն ի հայտ է գալիս համեմատության արդյունքում: Չժավալվելով մանրամասնությունների վրա՝ նկատենք, որ, օրինակ, «Ա» գրի հնագրության մեջ, մասնավորապես X – XIII դարերում, աջակողմյան ստեղնից բարակ գիծը սկիզբ է առնում ոչ թե տա-

\*Հոդվածն ընդունվել է տպագրության 15.01.2012:

<sup>1</sup> Տե՛ս Ա. Գ. Աբրահամյան, Հայոց գիր և գրչություն, Եր., 1973, էջ 70-73:

ռասյան գլխից, այլ նրա մեջտեղից<sup>2</sup>: Կարծում ենք՝ XIII դարի սույն արձանագրությունը, ըստ հնագրական տեսակի, լիովին համապատասխանում է ասվածին և կարող է համարվել տվյալ դարաշրջանի հնագրության ինքնատիպ օրինակներից մեկը:

Ուսումնասիրություններից պարզվում է, որ պատվանդանը նախապես եղել է Սուրմալու գավառի Խալֆալու գյուղում և միայն 1874 թվականին է տեղափոխվել Վաղարշապատ: Նշյալ հանգամանքը լուսաբանելու նպատակով ներկայացնում ենք հետևյալ վկայությունները:

Համաձայն Հայր Ալիշանի տեղեկության՝ 1874 թ. «...գեղջն Գալֆալու յայտնեցան յայլևայլ ժամանակս մնացուածք վաղեմի շինութեանց և անօթոց, ընդ որս և տապանագիրս այս.

**ԹՎ... Լ Ա (582) ՇՆՈՐՀԻՆ ԱՍՏՈՒԾՈՅ  
ԵՍ ՎԱՀՐԱՄ ԿՍԿԾԱԼԻ  
ՈՐ ԵՒ ԶԽԱԶՍ ԿԱՆԳՆԵՑԻ  
ՆԻՀՈՐԿԱՆՆ ԵՒ ԹԱՄԱՄԻ  
ՏՂԱՅ ԵՂԵԱԼՔ ՅԱՅՍՄ ԱՇԽԱՐՀԻ  
ԿՍԿԻԾ ԹՈՂԻՆ ԱՆՄՈՌԱՆԱԼԻ  
ՀԱԻՐՆ ԵՒ ՄԱԻՐՆ ՍԵՒԱՍՏԻ  
ՈՎ ԿԱՐԳԱՅՈՂՔ ԱՅՍՄ ԳՐԻ  
ԶՄԵՉ ՅԻՇԵՅԷՔ, ՏԵՐՆ ՈՂՈՐՄԻ  
ՅԱՀԵՂ ԱԻՈՒՐՆ ԳԱՏԱՍՏԱՆԻ՝:**

Հայր Ալիշանը նշում է, որ այս տապանագիրը տասնչորս տարի անց՝ 1888 թ., իրեն է ուղարկել Վրաստանի Հայոց առաջնորդ Տեր Արիստակես եպիսկոպոս Մեղրակյանը, ով հավելել է նաև հույժ կարևոր մի ծանոթություն, որը մեջբերում ենք.

«Այս տապանագիր գտաւ 14 ամօք յառաջ (1874), յիմում ծննդավայրի, ի Խալֆալու գեղջ Սուրմալու գաւառի, հեռի յԻգտիր աւանէ 5 վերստիս ի փորելն գիւղականաց՝ գիւտի նպատակաւ զհողակոյտս ընդարձակ տեղոյջ միոյ ի հարաւակողմն գեղջ՝ այժմ ի բնակչաց Վանքատեղ անուանելոյ: Պատահմամբ ի հայտ եկեալ յողողմանէ տեղոյն ի ջուրց՝ արծաթեայ և պղնձեայ դրամքք՝ զրգիռ ետուն զհիւղականաց փորփորելոյ զտեղին. և աշխատութիւն նոցա երբեմն զպահեստ արծաթի դրամոց, երբեմն զմեծամեծ գինոյ և զայլ անօթս ի յայտ ածելով, ի վերջոյ ամ յերեսն ի փոշիախառն հողակուտէն զհիմունս փոքրիկ եկեղեցոյ միոյ ի տաշեալ քարանց, և ընդ քանի մի կիսաբեկ խաչքարանց՝ **զքարն անխաչ, որոյ վերայ տապանագիրն է վերոյիշեալ, որ երեսի լինել պատուանդան խաչքարի** (ընդգծումը մերն է - Ա.Հ.): Թէպէտև թուական տապանագրոյն որպէս եղեալն է՝ կրէ այժմ միայն զԼ և Ա տառս, սակայն յանեղծութենէ և ի ձեւոյ տառիցն՝ մարթ է կասկածել վասն այդչափ հնութեան. և հաւանելի է թէ յառաջ քան զտառսն զայնոսիկ լեալ իցէ Չ գիր, որոյ հագիւ իմն աղօտ նշմարելի հետս՝ հաւանեալ եմ ընդունել:

Գիւղացիք զքանի մի խաչքարինս տարեալ եղեալ են ի վերայ գերեզմանաց

2 Տե՛ս **Կարո Դաֆաղարյան**, Էջեր հայոց միջնադարյան մշակույթի և պատմության, «Գիտական ժառանգություն», հ. 5, եր., 2007, էջ 144-146:

3 **Ղ. Ալիշան**, Այրարատ. Բնաշխարհի Հայաստանայց, Վենետիկ, 1890, էջ 125:

ննջեցելոց իւրեանց. քանդակք նոցին մնացեալք ըստ մասին՝ երևին նուրբ և հին»<sup>4</sup>:

Խալֆալուն (Գալֆալու, Ղալֆալի, Ղալֆալու) գյուղ է Երևանի նահանգի Սուրմալուի գավառում, Իգդիրի մոտ: Տեղի բնակչության զբաղմունքը եղել է երկրագործությունն ու անասնապահությունը<sup>5</sup>: Հենց այս գյուղի Վանքատեղ կոչված վայրում 1874 թ. գտնվել են արծաթե և պղնձե դրամներ, նաև՝ վերոնշյալ պատվանդանը:

Ալիշանից հետո 1901 թ. «Բանասեր» հանդեսում հրատարակած «Մեր հնությունները» հոդվածում Կարապետ Բասմաջյանը անդրադառնում է նաև հիշյալ արձանագրությանը՝ նշելով. «...երկաթագիր արձանագրությունն ալ կը գտնուի Գեորգեան ճեմարանի բակում, եւ դուրս բերուած է Սուրմալի վիճակի Խալֆալու գիւղի «Վանքատեղ» կոչուած աւերակներից»<sup>6</sup>: Փաստորեն, մինչ Ս. Հռիփսիմեի վանք հասնելը պատվանդանը Խալֆալուից բերվել ու դրվել է Մայր տաճարի տարածքում, մասնավորապես Գեորգյան ճեմարանի դիմաց:

Ըստ Բասմաջյանի վկայության՝ Վանքատեղը, որտեղից գտնվել է պատվանդանը, «հին մենաստան մը եղած է, ինչպէս ցոյց կուտան անունն եւ հոն գտնուած փոքրիկ եկեղեցոյ մը աւերակն, որ այժմ Ս. Յովհաննէս կը կոչուի եւ ուխտատեղի դարձած է մօտակայ բնակչաց»<sup>7</sup>: Վերջինս նշում է նաև, որ արձանագրությունն Ալիշանի մոտ հրատարակված է թերի ու սխալաշատ, և եթե թվականն իրոք կարդանք LU (= 582), ապա գործ կունենանք բավականին հին արձանագրության հետ: Սակայն կասկածից վեր է, որ թվականը ընդգրկող քանդակից դուրս՝ քիչ վեր, փորագրված է փոքրիկ «Չ», ինչն էլ հուշում է, որ արձանագրությունն ունի ոչ թե «LU» (582), այլ «ՉLU» (1282) թվականը<sup>8</sup>:

Մենք լիովին համակարծիք ենք Բասմաջյանին, քանզի, իսկապես, Արիստակես արքեպիսկոպոս Սեդրակյանի ընդօրինակման հիման վրա Հայր Ալիշանի հրատարակած սույն արձանագրության վերձանությունը հարուստ է սխալներով ոչ միայն թվականի առումով, այլև որոշ բառեր բաց թողնելու, սխալ ընթերցելու, տողերի քանակը չպահպանելու նկատառումներով:



Նկ. 1. Լուսանկարը՝ Կ. Բասմաջյանի 1901 թ. հրատարակած հոդվածից



Նկ. 2. Լուսանկարվել է 2011 թ.


4 Ղ. Ալիշան, նույն տեղում, էջ 125:  
5 Տե՛ս Թ. Խ. Հակոբյան, Ստ. Տ. Մելիք-Բախշյան, Զ. Խ. Բարսեղյան, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 2, եր., 1988, էջ 628:  
6 Կ. Բասմաջյան, Մեր հնութիւնները, «Բանասեր. հանդէս հնախօսական, պատմական, լեզուաբանական եւ քննական», Փարիզ, 1901, N 1-4, էջ 130-133:  
7 Նույն տեղում, էջ 133:  
8 Տե՛ս նույն տեղում, էջ 133:

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ  
Պ. (Ժ) ԳՐԱԳԻՐ, ՔԻՉ 1 (37) ԽՈՒՆՎԱՐ-ՄԱՐԿ, 2012  
ՎԵՄ ԽԱՆՈՒՄՆԱԿԱՆ ԽԱՆՈՒՄ

Բարեբախտաբար, Կարապետ Բասմաջյանն իր ժամանակին լուսանկարել է արձանագրությունը և այն զետեղել վերոնշյալ հոդվածի էջերում: Մենք փորձեցինք այդ լուսանկարը, որն արվել է շուրջ մեկ դար առաջ, համեմատել մեր կողմից արված լուսանկարի հետ: Հարկ ենք համարում ստորև ներկայացնել երկու լուսանկարներն էլ միաժամանակ:

Այնհայտ է, որ որոշ տառեր, անգամ բառեր եղծված են և դրանց վերականգնումը մեր կողմից արված վերծանության մեջ վերահաստատվեց՝ շնորհիվ Բասմաջյանի հոդվածում առկա լուսանկարի: Այսպես, այսօր արդեն խաթարվել է թվականն ընդգրկող հատվածը, գրեթե ամբողջովին եղծվել են «յայսմ աշխարհի», «հարն եւ մարն», «ահեղ ատոր դատաստանի» բառակապակցությունները, ինչպես նաև առանձին տառեր:

Սակայն, ինչպես Ալիշանի, այնպես էլ Բասմաջյանի կողմից արված սույն արձանագրության վերծանությունները հեռու են վիմագրագիտության մեջ ներկայումս ընդունելի պահանջներից: Ուստի, հաշվի առնելով այդ հանգամանքը, մեջբերում ենք արձանագրության գրչագիրը, ապա վերծանությունը՝ վիմագրագիտական համապատասխան պայմանական նշանների կիրառմամբ.



ԹՎ[ԻՆ] ՉԼԱ (1282 թ)

ՇՆՈՐՀԻԻՆ ԱՅԵՍ ՎԱՀՐԱՄ ԿՍԿԾ/ԱԼԻ ՈՐ ԵՒ ՁԽԱՉՍ ԿԱՆԿՆԵՑԻ  
ԱՌ.ՔՄ ԲԱՐԵ/ԽԱԻՍ Ի ՇՆՈՂՈՐԿԱՆ ԵՒ ԹԱՍԱՄԻ ՏՂԱՅ ԵՂԵ[Ա]Լ/Ք  
ԱՅՍՍ [ԱՇԵ]ԱՐՀԻ ԿՍԿԻԾ ԹՈՂԻՆ ԱՆՍՈՌ[Ա]Ն/ԱԼԻ ՀԱԻՐՆ ԵՒ  
ՄԱԻՐՆ ՍԵԻԱՍՏԻ ՈՎ ԿԱՐԴԱ/ՅՈՂ[Ք] [Ա]ՅՍՍՆ ԳՐԻ ՉՍԵՉ  
ՅԻՇԵՑԷՔ ՏՐՆ ՈՂՈՐ/Մ[Ի] [ԱՀԵ]Ղ [ԱԻՈՒ]Ր ԴԱՏԱՍՏԱՆԻ:

Արձանագրությունը չափածո է, ունի ներքին հանգավորում և կարող է դասվել հայ վիմագիր բանաստեղծությունների<sup>9</sup> շարքը՝ համարվելով դրանց հնագույն օրինակներից մեկը, քանի որ նմանատիպ բանաստեղծությունների թիվը

9 Հայ վիմագիր բանաստեղծության մասին տես Ս. Ա. Գևորգյան, Հայ վիմագիր բանաստեղծությունը (XVIII-XIX դդ.), Եր., 1989: Տես նաև՝ «Նովել, Հազար ու մի վիմագիր բանաստեղծություններ», Եր., 1999:

գերիշխող է դարձել ավելի ուշ՝ XVIII – XIX դարերում: Պատահական չէ, որ նախորդ վերծանողները, հաշվի առնելով արձանագրության չափածո բնույթը, այն վերածել էին կանոնական տողերի:

Ըստ էության, վիմագրում հիշատակված Վահրամը խաչքար է կանգնեցրել իր գավակների՝ Շնոհորիկի և Թամամի հիշատակին: Վահրամը հիշատակվում է որպես «կսկծալի», այսինքն՝ պետք է ենթադրել, որ վերջինիս դուստրերը հանդերձյալ կյանք են փոխադրվել երիտասարդ հասակում՝ կսկիծ թողնելով ծնողների սրտում:

Վիմագրում հիշված անձանց անդրադարձել է նաև Հր. Աճառյանը: Նա եկել է այն համոզման, որ Վահրամն, անշուշտ, Շնոհորիկի և Թամամի հայրն է, ով 1282 թ. խաչքար է կանգնեցրել մանուկ հասակում վախճանված դուստրերի հիշատակին<sup>10</sup>: Նշենք, որ «Շնոհորիկ» իգական անձնանունը Ալիշանի մոտ վերծանված է «Նիհորկան» ձևով:

Վիմագրում հիշատակված է նաև Վահրամի կին, Շնոհորիկի և Թամամի մայր Սևաստը: Անդրադառնալով այս անձնանվանը՝ Աճառյանը նշում է, որ այն միայն մեկ անգամ է հիշատակվել, այն էլ XIII դարի հիշյալ վիմագրում: Անվան ծագումը լեզվաբանը կապում է հունական «օգոստափառուհի», «վեհափառուհի» ձևերի հետ. բացի այդ հայտնի է եղել կայսրուհիների մոտ տիրոջ, որ հին հունարենում կարդացվել է «սեբաստե» կամ «սեվաստի»<sup>11</sup>:

Փաստորեն, հիշյալ արձանագրությունը, փորագրված լինելով ոչ թե տապանաքարի վրա, այլ խաչքարի պատվանդանի արևմտյան երեսին, ըստ բովանդակության պատկանում է հայ վիմական արձանագրության հիշատակագրային տեսակին: Այս տիպի վիմագրերում, որոնք մեծ մասամբ փորագրված են լինում տապանաքարերի վրա, հիշատակվում են հանգուցյալի կենսագրական հակիրճ տվյալները, տոհմային և դասային պատկանելությունը, մահվան հանգամանքները և այլն<sup>12</sup>: Վերոնշյալ վիմագրում, ինչպես նշեցինք, բացի վաղամեռիկ հանգուցյալների անուններից, հիշատակված էին նաև նրանց սգացող ծնողների՝ Վահրամի և Սևաստու անունները:

Խաչքարային արձանագրություններում և տապանագրերում նման ձևակերպումների հաճախ ենք հանդիպում: Ճանաչված հնագետ Համլետ Պետրոսյանը գերեզմանների վրա կանգնած խաչքարերն անվանում է վերգերեզմանային կոթողներ և շեշտում, որ հայ միջնադարյան գերեզմանային կառույցում խաչքարը միանգամայն հակադրված է տապանաքարին: Եթե տապանաքարն իր հորիզոնական դիրքով խորհրդանշականորեն իրականացնում էր խզումը, ապա խաչքարն իր ուղղահիգությամբ, հորինվածքով ու արձանագրությամբ իրագործում էր աստվածային գործության հետ հանգուցյալի կապը<sup>13</sup>: Ասվածի ցայտուն օրինակ է նաև խնդրո առարկա արձանագրությունը, որն սկսվում է հետևյալ բառերով. «Շնորհիւն Աստուծոյ... զխաչս կանկնեցի առ Քրիստոս բարեխաւս...», իսկ ավարտն ամփոփվում է ողորմություն հայցելու հայտնի բանաձևով. «...ով կար-

10 Տե՛ս **Հր. Աճառյան**, Հայոց անձնանունների բառարան, հ. Բ, Եր., 1944, էջ 265, նույնի՝ հ. Դ, Եր., 1948, էջ 171, նույնի՝ հ. Ե, Եր., 1962, էջ 26:

11 **Հր. Աճառյան**, նույնը, հ. Դ, էջ 484:

12 Տե՛ս **Գր. Մ. Գրիգորյան**, Հայկական վիմագրություն, Եր., 2000, էջ 67:

13 Տե՛ս **Ֆ. Լ. Պետրոսյան**, Խաչքար. ծագումը, գործառույթը, պատկերագրությունը, իմաստաբանությունը, Եր., 2008, էջ 340:

դացողը այսմն գրի գմեզ յիշեցէք Տերն ողորմի...»: Այսինքն՝ նշված տողերն ինքնին ամփոփում են հանգուցյալների՝ առ Աստված մերձեցման ձգտումը:

Խաչքարը սովորաբար կանգնեցվել է գերեզմանի արևելյան ծայրին՝ քանդակագարդ երեսը դեպի արևմուտք, և եթե նկատի առնենք այն, որ հանգուցյալը քաղվում էր՝ դեմքն ուղղված դեպի արևելք, ապա ստացվում է, որ նրա հայացքը մշտապես ուղղված է վերջին օրերին իր համար բարեխոսող, հոգու փրկություն հայցող խաչին<sup>14</sup>: Այս դեպքում ևս խաչքարը տեղադրողները հաշվի են առել այդ հանգամանքը և խաչն ուղղել դեպի արևմուտք:

Դառնալով խաչքարի քիվին փորագրված երկտող արձանագրությանը՝ պետք է հավաստենք, որ այն ցայսօր չի հրատարակվել: Վերը նշեցինք, որ, եթե պատվանդանը զարգացած միջնադարից մեզ հասած ինքնատիպ նմուշ է, ապա խաչքարը թե՛ քանդակային, թե՛ հնագրական ոճով բնորոշ է ուշմիջնադարյան, մասնավորապես XVI - XVII դարերի հորինվածքային ձևերին: Արձանագրությունը փոքր-ինչ եղծված է.

ՏՈՒՐԲ ԽԱՉՍ ԲԱՐԵԽԱԲՍ ՉԱԳԱՐԻՆ : ՈՐԴՈ / ՈՎԱՆԵՆԵՄԻՆ  
ՈՎ ՈՐ ԿԱՐԴԱՅ ՈՂ[ՈՐՄԻ]:

[ՄԲ] ԽԱՉՍ ԲԱՐԵԽԱԲՍ ՉԱԳԱՐԻՆ : ՈՐԴՈ / ՈՎԱՆԵՆԵՄԻՆ  
ՈՎ ՈՐ ԿԱՐԴԱՅ ՈՂ[ՈՐՄԻ]:

«ՍՈՒՐԲ ԽԱՉՍ ԲԱՐԵԽԱԲՍ» արտահայտությունը, որն իբրև բանաձև է դարձել խաչքարային արձանագրությունների սկզբնամասի համար, իրենում ամփոփում է մի տեսակ միջնորդություն, բարեխոսություն՝ ուղղված Աստծուն, որն իրագործվելու է Սուրբ խաչի միջոցով՝ հանգուցյալի հոգու անմահության համար: Այս դեպքում ննջեցյալը Ովանինեսի որդի Չաքարն է (վիմագրում՝ Չագար), ում հոգու համար կարդացողներից հայցվում է նաև ողորմածություն:

Հովհաննես (Յովհաննես) անձնանունն ունեցել է Յովհաննիկ, Յովհաննիսիկ, իսկ XVI դարից՝ Յովհաննէսուկ, Յովաննէսուկ փաղաքշական ձևերը: Հենց Ս. Հռիփսիմնի վանքում է գործել Յովհաննիկ վաներեցը, ով ժամանակակից է եղել Կոմիտաս Ա Աղցեցի կաթողիկոսին: Վերջինիս օրոք էլ կատարվել է վանքի նորոգությունը, որի վերահսկիչն էլ եղել է Յովհաննիկը<sup>15</sup>: Յովհաննիսիկ վարդապետ հիշատակվում է նաև XVI դարում, ում գրչին է պատկանում «Համառօտ ժամանակագրութիւն» աշխատությունը, որն ընդգրկում է



Նկ. 3. Խաչքարի ընդհանուր տեսքը

14 Տե՛ս նույն տեղում, էջ 340-341:

15 Տե՛ս Գր. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Գ, Եր., 1946, էջ 536:

գլխավորապես Արևելյան Անդրկովկասում 1572-1600 թվականներին տեղի ունեցած դեպքերի նկարագրությունը: Վերջինս հայտնի է նաև Հովհաննիսիկ Ծարեցի անվամբ, ով եղել է Ս. Թադեի վանքի միաբան, ապա ստացել վարդապետական աստիճան ու զբաղվել ձեռագրեր նորոգելով<sup>16</sup>:

Ամփոփելով նշենք, որ քննության ենթարկվող խաչքարն առանձնահատուկ է ոչ միայն որպես Ս. Հռիփսիմեի վանքի տարածքում առկա հուշակոթող, այլև այն ինքնատիպ է իր պատմությամբ, դրանց մասին եղած վկայություններով, որոնց նորովի քննությունը լույս է սփռում հայ քանդակագործական արվեստի, հնագրության, պատմության ու վիճագրագիտության բնագավառներում:

## Summary

### A KHACHKAR FROM THE MONASTERY OF ST. HRIPSIME

Arsen E. Harutyunyan

There is a Khachkar in the eastern side of St. Hripsime Monastery. It is remarkable for its 13th century inscription carved on the pedestal. Ghevond Alishan and Karapet Basmajyan have evidence about this inscription but their publications do not correspond with current requirements of Epigraphy. We have tried to compare the work of previous researchers with the work done by us on this inscription.

The content of the inscription has reference to the deceased and their weeping parents. The Khachkar was previously situated in the village of Khalfalu in the Surmalu province, and in 1874 it was brought to Vagharshapat. This Khachkar opens new pages and possibilities in Armenian Archaeology, Paleography and Epigraphy.

<sup>16</sup> Տե՛ս Մանր ժամանակագրություններ (XIII-XVIII դդ.) հ. II, կազմեց՝ Վ. Ա. Գալոբյան, Եր., 1956, էջ 235-239: Տե՛ս նաև Գր. Աճառյան, հ. Գ, էջ 536: